

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2011-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՊՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ (ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ)

ԳԱՎԱՌ 2011

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

Գավառի պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան կամ ԳՊՀ) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որն ունի կրթական, գիտական, ուսումնամեթոդական, դաստիարակչական, ինչպես նաև տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, մշակութային կարևոր նշանակություն:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում բնական և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի իրականացումը,
2. Գործատու սուբյեկտի պարտականությունների բարեխիղճ կատարումը, աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, սովորողներին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով և արժեքային համակարգով ապահովումը, մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ.

- 1) օրինականության,
- 2) ժողովրդավարության,
- 3) մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովման,
- 4) բարձրագույն կրթության մատչելիության,

- 5) կրթության հրապարակայնության, թափանցիկության,
- 6) սովորողների, դասախոսների և աշխատակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,
- 7) Համալսարանի միանձնյա և կոլեգիալ ղեկավարման սկզբունքների զուգակցման,
- 8) Համալսարանի ակադեմիական ինքնավարության,
- 9) Համալսարանում ակադեմիական ազնվության մշակույթի ապահովման,
- 10) ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության խթանման,
- 11) կրթության, գիտության և դաստիարակության զուգակցման,
- 12) կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության սկզբունքները:

**V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ.**

1. Համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգը հաստատում է ԳՊՀ կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը:
2. Համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգն իրականացնում են.
 - 1) ԳՊՀ գիտական խորհուրդը,
 - 2) ռեկտորատը,
 - 3) ֆակուլտետները,
 - 4) ամբիոնները,
 - 5) ակադեմիական քաղաքականության վարչությունը,
 - 6) որակի ապահովման բաժինը,
 - 7) Համալսարանի մյուս կառուցվածքային ստորաբաժանումները,
 - 8) ուսանողական ինքնակառավարման մարմինները:

**VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԳԻՏԱԷՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.**

1. Գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետային խորհուրդների, ամբիոնների կողմից բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ու արդյունքների մշտադիտարկում և շարունակական բարելավում:
2. Կրեդիտային համակարգի բոլոր տարրերի, առանցքային բաղադրիչների ուսումնասիրություն և համադրական վերլուծություն, դրանց հետևողական կիրառում ուսումնական գործընթացում:

3. Աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրում և ուսուցանվող մասնագիտությունների նկատմամբ շուկայական պահանջարկի և սոցիալական պատվերի գնահատում, ուսուցանվող մասնագիտությունների ցանկի ճշգրտում՝ արտաքին միջավայրի փոփոխություններին համապատասխան:
4. Բոլոր մասնագիտությունների բազային և աշխատանքային ուսումնական պլանների պարբերաբար վերանայում և բարելավում, ուսումնական պլաններում առկա պարտադիր և կամընտրական բաղադրիչների ճշգրիտ հարաբերակցության սահմանում:
5. Ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի շարունակական թարմացում, կրթական ելքային արդյունքների, ակնկալվող մասնագիտական իրագելությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների հնարավորինս հստակ սահմանում:
6. ԳՊՀ ուսանողի և դասախոսի ուղեցույցերի շարունակական բարեփոխում և ամենամյա հրատարակում, դասընթացների նկարագրերի հստակեցում և մասնագիտությունների տեղեկագրքերի վերամշակում ու արդիականացում:
7. Ուսանողների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ գիտական-տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար:
8. Ուսանողների շարժունությունն ապահովող կանոնակարգերի, սահմանված կառուցակարգերի և պահանջվող փաստաթղթերի՝ վաստակած կրեդիտների փոխանցման ակադեմիական տեղեկանքի և այլ ձևաթղթերի կատարելագործում եվրոպական չափանիշներին համապատասխան:
9. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման շրջանակի ընդլայնում:
10. Դասավանդման ավանդական և արդի մեթոդների արդյունավետ համադրում, համագործակցային, փոխներգործուն (ինտերակտիվ) և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառում:
11. Դասախոսության՝ որպես գիտելիքի փոխանցման միակ ձևի՝ կարծրատիպի հաղթահարում, դասախոսների սոցիալական նոր դերի՝ ուսանողների ուսումնառության և ինքնուրույն գիտելիքների ձեռք բերելու գործընթացի ճիշտ ուղղորդման ու համակարգման գործառնությունների արմատավորում:
12. Կրեդիտային համակարգի պայմաններում սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի կատարելագործում, գործոններին տրվող արժեքների ճշգրտում:
13. Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր ձևերի և եղանակների ներդրում, այդ թվում՝ համակարգչային թեստերի միջոցով սովորողներին գնահատում:
14. Ավարտական ատեստավորման գործընթացի կարևորում, ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքում

սովորողների գիտելիքների բազմագործոն գնահատման կառուցակարգերի կատարելագործում կրեդիտային համակարգի սկզբունքներին ու չափումներին համապատասխան:

15. Բակլավլրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին եվրոպական նմուշի՝ ութ կառուցամասերով երկլեզու դիպլոմի հավելվածի բովանդակության կատարելագործում:
16. Կրթության որակի ուսումնասիրություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, ինքնավերլուծության և ինքնագնահատման պարբերաբար իրականացում, անհրաժեշտ միջոցների ձեռնարկում՝ կրթության որակի ապահովման և Համալսարանի հավատարմագրման նպատակներով:
17. ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության որակի ապահովման բաժնի կողմից պարբերաբար որակի մշտադիտարկման, ներքին ստուգումների, կրթական ծրագրերի իրականացման ընթացքի, դասընթացների կազմակերպման մեկնարկային հնարավորությունների, դասախոսական կազմի, շրջանավարտների գիտելիքների որակի, աշխատաշուկայում թողարկված մասնագետների նկատմամբ եղած պահանջների, այլ գործընթացների նկատմամբ վերահսկողության իրականացում:
18. Դասախոսների աշխատանքի և դասավանդման որակի գնահատման նոր կառուցակարգերի մշակում և կիրառում, դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված՝ տարբերակված վարձատրության համակարգի գործարկում:
19. Ֆակուլտետների և ամբիոնների աշխատանքի որակի գնահատման նոր գործիքների կիրառում, գիտահետազոտական գործունեության արդյունքների հաշվառում:
20. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտի կայացում, ուսանողների խնդիրների պարզաբանում և պատշաճ լուծում, սովորողների ինքնուրույնության բարձրացում իրենց կրթական անհատական ծրագիրը կազմելիս և ուսմանը վերաբերող այլ հարցերում:
21. Գրադարանի գրքաֆոնդի համալրում, նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուղեցույցների, մենագրությունների ձեռքբերում, տեղեկատվական պաշարների հարստացում, էլեկտրոնային գրադարանի, էլեկտրոնային ընթերցասարահի ստեղծում, գրադարանի տեղեկատվական ռեսուրսների էլեկտրոնային քարտարանի ձևավորում, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների համալսարանական պորտալի ստեղծում:
22. Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողների համար ուսուցման էլեկտրոնային համակարգի ստեղծում, ուսումնամեթոդական ձեռնարկների կազմում, կրթական անհրաժեշտ ծառայությունների և սպասարկման պատշաճ միջավայրի ձևավորում:
23. Հեռակա ուսուցման համակարգում նպատակային կարգով ընդունելության շրջանակում համագործակցություն ավագ և հիմնական դպրոցների, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանի կրթության վարչության հետ:

24. Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի կարևորում, գիտա-հետազոտական պրակտիկայի և գիտական սեմինարի արդյունավետության բարձրացում, հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացում:
25. Մագիստրոսական կրթական աստիճանում առաջատար մասնագետների ներգրավվածության ապահովում, մագիստրոսների հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածության աճ:
26. ԳՊՀ-ի՝ որպես հեռավար ուսուցման մարզային կենտրոնի կայացման համար գիտական, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, ֆինանսական բազայի ստեղծում:
27. Համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական զարգացում՝ վերապատրաստման, որակավորումների բարձրացման ծրագրերի միջոցով, որակյալ դասախոսական կազմի պահպանում:
28. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի համալրում երիտասարդ կադրերով, փորձառու մասնագետների և սկսնակ դասախոսների արդյունավետ համագործակցության ապահովում:
29. Երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, նրանց գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկում:
30. ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների հաշվառմամբ:
31. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության բարոյական և նյութական խրախուսում, դասախոսների վարկանիշային գնահատման գործընթացում նրանց հրատարակած գիտական աշխատանքների հաշվառում:
32. Միջբուհական կոնսորցիումի համատեղ ուժերով միջբուհական ամբիոնների ձևավորում և նրանց կողմից համալիր (միջմասնագիտական) մագիստրոսական ծրագրերի մշակում և սպասարկում, գիտական ծրագրերի իրականացում:
33. Էլեկտրոնային գիտական քննարկումներին դասախոսների և ուսանողների մասնակցության խրախուսում, նրանց իրազեկում կրթական և գիտական ուղղվածության համացանցային կայքերի մասին:
34. Միջազգային և հանրապետական գիտաժողովներին գիտամանկավարժական կազմի անդամների մասնակցության, միջազգային գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսում:
35. Միջբուհական գիտական ծրագրերի, համատեղ հետազոտությունների իրականացման նպատակով ֆինանսավորման աղբյուրների որոնում, դրամաշնորհային ծրագրերի ընձեռած հնարավորությունների օգտագործում:

**VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. ԳՊՀ կրթական միջավայրի կարիքների պարզաբանում և թերությունների շտկում, գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծում:
2. ԳՊՀ-ում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և գործավարության համակարգի ներդրում և կատարելագործում:
3. ԳՊՀ-ի՝ որպես միացյալ տեղեկատվական տարածքի ձևավորում, տեղեկատվական արդի տեխնոլոգիաներով հագեցած լսարանների ստեղծում բոլոր մասնաշենքերում:
4. ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի ստեղծում և շարունակական համալրում, այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարանների, համացանցային գիտական, տեղեկատվական աղբյուրների հետ ուսանողների և դասախոսների աշխատանքի ապահովում:
5. ԳՊՀ ուսանողական համակազմի և պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում, բոլոր դասախոսների և ուսանողների համար էլեկտրոնային փոստի հասցեների ապահովում:
6. ԳՊՀ ամբիոններում առկա գիտական, մեթոդական, կրթական, տեղեկատվական ռեսուրսների միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծում:
7. Դասընթացներին ուսանողների գրանցման, գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման արդյունքների հաշվառման, ակադեմիական տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում:
8. Դասախոսությունների, ուսումնական այլ նյութերի էլեկտրոնային տարբերակների զետեղում Համալսարանի էլեկտրոնային ուսուցման համակարգում, և առկա ու հեռակա ֆակուլտետների բոլոր ուսանողների համար դրանց մատչելիության ապահովում:
9. Աստիճանաբար ուսանողների առաջադրանքների տրման, աշխատանքների հանձնման և ստուգման կազմակերպում էլեկտրոնային կապի միջոցով:
10. Փուլային անցում նոր քննակարգին, ուսանողների գիտելիքների ստուգման ձևերի ու մեթոդների բազմազանեցում, համակարգչային թեստավորման եղանակի կիրառում:

**VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. Ուսանողների շրջանում գիտելիքների արժևորում, ուսման նկատմամբ գիտակից և պատասխանատու վերաբերմունքի ձևավորում, կրթամակարդակի գնահատում՝ որպես բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն:
2. Ուսանողների լեզվական գրագիտության ապահովում, օտար լեզուներով հաղորդակցման, այլալեզու գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հնարավորության ընձեռում:
3. Ուսանողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության ապահովում, «Ինտերնետ» համացանցից և ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում:
4. Սովորողների հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացում, անընդհատ ինքնակատարելագործման և լիարժեք ինքնաարտահայտման հոգեբանական պատնեշների հաղթահարում, ինքնաիրացման հնարավորությունների ընձեռում:
5. Ուսանողների կարիքների բացահայտում, թղթային և էլեկտրոնային անձնական գործերի կազմում, սոցիալական վիճակի «անձնագրավորում», սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերի իրականացում:
6. Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության գործունեության ակտիվացում, համալսարանական բոլոր գործընթացներում նրանց ակտիվ դերակատարության ապահովում:
7. Ուսանողների համար կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների կազմակերպում, «Լավագույն ուսանող», «Լավագույն խումբ», «Լավագույն դասախոս», «Լավագույն գիտական աշխատանք» և այլ անվանակարգերում մրցանակաբաշխությունների կազմակերպում, գիտելիքի արժևորմանը միտված ծրագրերի իրականացում:
8. Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում՝ սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության նպատակով:

9. Ուսանողների հետ շարունակական բացատրական աշխատանքի կատարում, որպեսզի սովորողները ստանան անձնական պատասխանատվություն իրենց ուսման գործընթացի և կրթական ելքային արդյունքների նկատմամբ, դրսևորեն ինքնուրույնություն և կարողություն՝ ճիշտ նախանշելու իրենց կրթական հետագիծը:
10. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:

**IX. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.**

1. Համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավում, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառում:
2. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների հստակեցում, նրանց իրավասությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում, գործունեության հստակ ուղղորդում, ներդաշնակ և համագործակցված աշխատանքի ապահովում:
3. Համալսարանի ֆինանսական կայունության ապահովում՝ ֆինանսական հոսքերի ճշգրիտ պլանավորման և եկամուտների արդյունավետ օգտագործման միջոցով:
4. Բազմախողովակ ֆինանսավորման կառուցակարգերի կիրառում, հովանավորների, բարերարների հնարավորությունների օգտագործում:
5. Նպատակային աշխատանք միջազգային կառույցների, դոնոր կազմակերպությունների հետ:
6. Համալսարանի եկամուտների, բարեսիրական հատկացումների և այլ աղբյուրների հաշվին սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի զեղչում կամ զիջում, բարեխիղճ աշխատակիցների խրախուսում:
7. Համալսարանի նյութատեխնիկական բազայի պահպանում և ընդլայնում, լաբորատոր բազայի, ուսումնական տարածքի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների համալրում, Համալսարանի գույքի նպատակային և խելամիտ տնօրինում, խնայողաբար օգտագործում:
8. ԳՊՀ մասնաշենքերի բարեկարգում, կապիտալ և ընթացիկ նորոգումների իրականացում:
9. ԳՊՀ դասախոսների հանրակացարանի վերանորոգում, պայմանների բարելավում:

10. ԳՊՀ դահլիճի վերանորոգում, տեխնիկական վերազինում, լուսավորության նոր համակարգի տեղադրում:
11. Համալսարանի տեխնիկական բազայի վերազինում, արդի տեխնոլոգիական միջավայրի ձևավորում:
12. Փոքր տպարանի հիմնում, տպագրական-հրատարակչական գործի կազմակերպում:
13. ԳՊՀ մարզադահլիճների վերանորոգում, մարզային և հանրապետական նշանակության մարզամշակութային միջոցառումների կազմակերպում:
14. Գրադարանի և ընթերցասրահի բարեկարգում, արդիական պայմանների ստեղծում:
15. ԳՊՀ կենսապահովման գործառույթների իրականացում, ուսանողների ուսման և դասախոսների ակտիվ մանկավարժական ու գիտահետազոտական գործունեության համար պայմանների ապահովում, որակյալ կրթական և աշխատանքային միջավայրի ստեղծում:
16. Ֆինանսական, նյութատեխնիկական միջոցների կառավարման, ներբուհական տնտեսության կազմակերպման, գնումների կատարման կառուցակարգերի, էլեկտրոնային հաշվապահության գործող ծրագրի կատարելագործում:

**X. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.**

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, Կրթության ազգային ինստիտուտի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, մանկավարժական և լեզվաբանական կրթություն իրականացնող բուհերի միջբուհական կոնսորցիումների, այլ կառույցների հետ ակտիվ համագործակցություն,:
2. Հայաստանի Հանրապետության և զարգացած պետությունների առաջատար բուհերի փորձի ուսումնասիրում և տեղայնացում:
3. Համագործակցություն այլ կրթական, գիտական հաստատությունների, դաստիարակչական, մշակութային ուղղվածության կազմակերպությունների հետ: Համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի գործունեության արդյունքների վերլուծություն և եզրահանգումների կատարում («բենչմարքինգի» կառուցակարգերի կիրառում):
4. Համալսարանի կրթական ծառայությունների պատշաճ ներկայացում և գովազդում՝ զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով, հանրությանը հավաստի տեղեկատվության մատուցում:

5. Հանրության հետ Համալսարանի կապերի ակտիվացում, մարզի բոլոր համայնքներում քարտզարշավի կազմակերպում, ավագ դպրոցների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստում:
6. «Համալսարան-դպրոցներ» բազմաբնույթ համագործակցության ապահովում, գործընկեր դպրոցների ցանկի ընդլայնում, դպրոցների տնօրենների, մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդափավորումների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում, խորհրդակցությունների, «Կլոր սեղանների», քննարկումների կազմակերպում, «ԳՊՀ-ն՝ Գեղարքունիքի մարզի դպրոցներին» ծրագրի իրականացում:
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ակտիվացում, քոլեջների և ուսումնարանների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ Համալսարանում կրթությունը շարունակելու վերաբերյալ պայմանագրերի կնքում:
8. Արդյունավետ և նպատակաուղղված աշխատանքի կազմակերպում գործատուների և գործընկեր կազմակերպությունների՝ ՀՀ պետական և ոչ պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես, Գեղարքունիքի մարզպետարանի, համայնքապետարանների, ինչպես նաև իրավապահ մարմինների, հարկային տեսչության, բանկերի մասնաճյուղերի, ձեռնարկությունների, տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող սուբյեկտների հետ:
9. ՀՀ Գեղարքունիքի մարզի շահառուներին կրթական ծառայությունների մատուցման կենտրոնի ձևավորում, ԳՊՀ գրադարանի, տեղեկատվական, տեխնիկական և այլ առկա ռեսուրսների օգտագործում:
10. ՀՀ Գեղարքունիքի մարզում հետազոտությունների իրականացում, պատմամշակութային վայրերի ուսումնասիրում, գիտահետազոտական գործունեության արդյունքների օգտագործում ուսումնական գործընթացում:

XI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.

1. Համալսարանի աշխատակիցների սոցիալական կարիքների հետազոտություն և հնարավորության սահմաններում օժանդակության ցուցաբերում:
2. Աշխատավարձերի աստիճանական բարձրացում, պարգևատրումների, նյութական և բարոյական խրախուսման այլ ձևերի կիրառում:
3. Ուսանողների և աշխատակիցների սննդի, հանգստի, ժամանցի պայմանների բարելավում:

4. Հանրապետությունում և մասնավորապես ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվող կրթամշակութային միջոցառումներում, սոցիալական տարբեր ծրագրերում ԳՊՀ-ի աշխատակիցների և ուսանողների առավելագույն ներգրավում և Համալսարանի բարի համբավի ամրապնդում:
5. Համալսարանի շրջանավարտների հետ կապի պահպանում, շրջանավարտների տվյալների տեղեկատվական բազայի ստեղծում, անմիջական և էլեկտրոնային հաղորդակցության ապահովում:
6. ԳՊՀ շրջանավարտների և Համալսարան-գործատու համագործակցության կենտրոնի ստեղծում, Համալսարանի «Կարիերայի կենտրոնի» գործունեության արդյունավետության բարձրացում, տեղեկատվության կուտակում մարզի գործատուների վերաբերյալ, թափուր աշխատատեղերի մասին տվյալների բազայի ստեղծում, ԳՊՀ շրջանավարտներին հնարավոր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
7. Համալսարանի տեղեկատվական նյութերի հրապարակում, համագործակցություն ԶԼՄ-ների հետ, ԳՊՀ՝ www.gsu.am ինտերնետային կայքի կատարելագործում, տեխնիկական և ծրագրային բարելավում:
8. Համալսարանի զբոսաշրջային ակումբի հիմնում, ուսանողների և աշխատակիցների համար դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր արշավների կազմակերպում, հայրենաճանաչության ծրագրերի իրականացում:
9. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, կաշառակերության և կոռուպցիայի այլ դրսևորումների բացառում:

XII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.

1. **Գավառի պետական համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը** Համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգի բաղկացուցիչ մասն է, որը միտված է բուհի՝ որպես ժողովրդավարական սկզբունքներ որդեգրած բաց, թափանցիկ հաստատության զարգացման ապահովմանը:
2. **Ռազմավարական ծրագրի նպատակն է** Համալսարանի հակակոռուպցիոն պաշտպանական կառուցակարգերի ամրապնդումն ու զարգացումը, կոռուպցիոն երևույթների բացառումը:

3. **Ռազմավարական ծրագրի խնդիրն է** Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունների և սկզբունքների ամրագրումը, ակնկալվող արդյունքների հստակեցումը, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացումը:

4. **Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը ներառում է հետևյալ միջոցառումները.**

1) Համալսարանի կառավարման արդյունավետության բարձրացում, Համալսարանում վարչարարության շարունակական բարելավում, «միջնորդ» օղակների դերակատարության բացառում, ուսանողների, ծնողների և դասախոսների հարցերին օպերատիվ ու անմիջական պատասխանում, համալսարանում «մեկ պատուհանի» սկզբունքով դիմումների ընդունում ու պարզաբանումների կատարում, Համալսարանի համացանցային՝ www.gsu.am կայքի միջոցով համակողմանի, ամբողջական և մատչելի տեղեկատվության տրամադրում:

2) Համալսարանի կառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրագործման անդրդվելի կամքի, վճռականության ու պատրաստականության դրսևորում, հակակոռուպցիոն միջոցառումների մասնակցային իրագործում և դրանց արդյունավետության ապահովում, ակադեմիական անազնվության և կոռուպցիայի բոլոր դրսևորումները անընդունելի համարող բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում:

3) Կոռուպցիոն վտանգների կանխարգելման նպատակով խիստ հսկողության իրականացում հետևյալ գործընթացների նկատմամբ.

ա/ ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննություններ,

բ/ ամփոփիչ ատեստավորման քննություններ,

գ/ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանություններ,

դ/ ուսանողների հեռացման, ազատման և վերականգնման գործընթացներ,

ե/ կրթության առաջին մակարդակից՝ բակալավրիատից ուսանողների անցում հաջորդ մակարդակին՝ մագիստրատուրային,

զ/ ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրեր, ներբուհական և միջբուհական տեղափոխություններ:

4) Կրթության որակի բարձրացում՝ ապահովելով ուսուցման (դասավանդման) և ուսման (ուսումնասիրության) պատշաճ որակ, կրթության բովանդակության հարստացում, ուսուցման մեթոդների բազմազանեցում, ուսանողների մոտ ուսման նկատմամբ հետաքրքրության առաջացում, այնպիսի մթնոլորտի ձևավորում, որի պայմաններում ուսանողները կխորշեն անազնիվ ճանապարհով, զարտուղի միջոցներով գնահատականներ «վաստակելուց»:

- 5) Կրթական ծառայությունների մատուցման որակի չափանիշների հստակեցում, կրթության ելքային արդյունքների կենսագործում, կրթական բոլոր աստիճաններում որակի մշակույթի ձևավորում:
- 6) Կրթական ծառայությունների մատուցման գործընթացի մշտադիտարկում, կրթության որակի վերաբերյալ ուսանողների բավարարվածության աստիճանի պարզում, սովորողների կողմից կրթության և կրթական արժեքների կարևորության ընկալման մակարդակի գնահատում:
- 7) Ուսումնական գործընթացի կարգավորման կառուցակարգերի, Համալսարանի կանոնակարգերի շարունակական բարելավում, բոլոր գործընթացների պատշաճ վերահսկողության և մշտադիտարկման ապահովում:
- 8) Համալսարանի ուսանողների շրջանում առողջ մրցակցային միջավայրի ստեղծում, անվճար և վճարովի հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) իրականացում՝ օբյեկտիվության և արդարության սկզբունքներով:
- 9) Ուսանողական ինքնակառավարման մարմինների դերի շարունակական բարձրացում, ուսանողների ներգրավում համալսարանական բոլոր կարևոր խնդիրների լուծման գործընթացներին:
- 10) Ուսանողների մեջ օրինականության, օբյեկտիվության, սոցիալական արդարության սկզբունքների խորքային ընկալման և կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի արմատավորում, կրթական գործընթացի կոռուպցիոն վտանգներ պարունակող փուլերի նկատմամբ ուսանողական վերահսկողության իրականացում, ուսանողների հակակոռուպցիոն ներուժի օգտագործում:
- 11) Ուսանող-դասախոս փոխհարաբերությունների նոր մոդելների ներդրում, բարիդրացիական գործընկերային հարաբերությունների, կրթության մասնակցային բնույթի ձևավորում, փոխադարձ հարգանքի վրա խարսխված ստեղծագործ աշխատանքային մթնոլորտի ապահովում:
- 12) Ստացված յուրաքանչյուր ահազանգին պատշաճ արձագանքում, անընդունելի արարքների բացահայտում ու կանխում, ուսանողների և նրանց ծնողների դիմումների ու բողոքների ընդունման, գրանցման և սահմանված կարգով դրանց ընթացք տալու գործընթացի կատարելագործում:
- 13) Համալսարանի կորպորատիվ արժենորմատիվային համակարգի, գաղափարախոսության, սկզբունքների ու աշխատառճի ամրապնդում, ներհամալսարանական հարաբերությունների հստակ կանոնակարգում, արտահամալսարանական կապերի ու առնչությունների ընդհանուր նորմերի սահմանում, ծագած բոլոր խնդիրների արդարացի և օպերատիվ լուծում:

- 14) Համալսարանի աշխատակիցների մասնագիտական չափորոշիչների հստակ սահմանում, պաշտոնների նկարագրերի կազմում ու հաստատում, նրանց գործունեության սահմանափակումների ամրագրում, աշխատանքի խրախուսման և շահադրդման (մոտիվացիայի) համակարգի բարելավում:
- 15) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային կարողությունների զարգացում, նրանց գործունեության արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության ապահովում, աշխատանքի արդյունքների գնահատման նոր չափանիշների ներդրում:
- 16) Վճիռների կայացման և որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, որոշումների ու հրամանների հստակ կատարում, Համալսարանում ուղղահայաց՝ վերևից ներքև և ներքևից վերև, ինչպես նաև հորիզոնական ուղղություններով հաշվետվողականության, համագործակցության և վերահսկողության կառուցակարգերի կատարելագործում:
- 17) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև տեղեկատվության լիարժեք, հստակ և օպերատիվ փոխանակման, մշակման և վերլուծության կառուցակարգերի կիրառում, հիմնավորված և արժանահավաստ տեղեկատվության տարածում:
- 18) Համալսարանում տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման երաշխիքների ապահովում, ուսանողներից և ծնողական համայնքից տեղեկատվության ստացում ու վերլուծության, եզրահանգումների կատարում և համապատասխան միջոցների ձեռնարկում:
- 19) Համալսարանում կատարողական կարգապահության, աշխատանքային բարեխղճության և պատասխանատվության բարձրացում:
- 20) Վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի բոլոր անդամների համար Համալսարանում ընդունելի վարքագծի նորմերի և թույլատրելի արարքների շրջանակի հստակ սահմանում, անթույլատրելի արարքների անցանկալի հետևանքների պարզաբանում, կանխում, ԳՊՀ Ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների իրականացում:
- 21) Համալսարանի հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատանքների ակտիվացում, համագործակցություն հանրապետական և մարզային ԶԼՄ-ների հետ, հասարակության մեջ ԳՊՀ-ի՝ որպես հակակոռուպցիոն պայքարի ջատագով բուհի նկատմամբ վստահության ամրապնդում:
- 22) Համալսարանի առկա և հեռակա ֆակուլտետներում կոռուպցիայի հասկացության, էության, պատճառների ու պայմանների, սուբյեկտների, հետևանքների, կոռուպցիոն երևույթների կանխարգելման թեմաներով ուսուցման կազմակերպում, Համալսարանի դասախոսների և իրավաբանական կլինիկայի ուսանողների ուժերով հանրային իրազեկում, ՄԱԿ-ի

Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերի դրույթների, ՀՀ օրենսդրության նորմերի հանրամատչելի ներկայացում ու պարզաբանում:

23) Ուսանողների շրջանում անանուն հարցումների պարբերաբար իրականացում՝ կոռուպցիոն վտանգների հայտնաբերման ու կանխման նպատակով, հարցումների անցկացման մեթոդաբանության ու ընթացակարգերի կատարելագործում:

24) Կոռուպցիայի վերաբերյալ գիտական զեկուցումների, հոդվածների և թեզերի ներկայացում, մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին, «Կլոր սեղաններին», բանավեճերին ու քննարկումներին:

25) Համալսարանի կանոնակարգերի և ընթացակարգերի, բոլոր գործընթացների հակակոռուպցիոն փորձաքննության անցկացում, կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրում, վերլուծություն և տեղայնացում, կոռուպցիայի կանխարգելման ընդունված գործիքների հետևողական կիրառում: